

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Անհրաժեշտությունը

Նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 38 արձանագրությամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին>> թիվ 800-Ն որոշման թիվ 1 հավելվածի 13-րդ կետով:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը կիսրանի մարզային ենթակառուցվածքների բնականոն գործունեությունը, մարզի համայնքների շարունակական և համաչափ զարգացմանն ու ազգաբնակչության կենսապայմանների բարելավմանը:

3. Տվյալ բնագավառում իրականացվող հաղափականությունը

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը կհաղթահարվեն տարածքային զարգացածության անհամաչափությունները և անհամամասնությունները:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Կարգավորման առարկան մարզերի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավումն է:

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք

Նախագծի մշակումը իրականացրել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը:

6. Ակնկալվող արդյունքը

Ծրագրերի գործունեության արդյունքում նախատեսվում է մարզերում կրճատել աղքատությունը, զարգացնել ենթակառուցվածքները, բարենպաստ պայմաններ ստեղծել ՓՄՁ-ների զարգացման համար, որոնցով պայմանավորված կբարելավվեն մարզերի սոցիալ-տնտեսական պայմանները:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի նախագծերը կամ դրանց

ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և /կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն սպասվում: